# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

**Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ**

**20.01.2020Թ.**

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են Վ.Բաբայանը, Ն.Վարդանյանը, Գ.Երիցյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղարի Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը,Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Գ.Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:***

***<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>***

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 1 հերթական նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:
3. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:
4. Չարենցավան համայնքի սեփականության 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:
5. Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի 4-րդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի հաղորդման մասին:
6. Չարենցավան համայնքում սոցիալական աջակցություն տրամադրելու կարգը սահմանելու մասին:
7. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ԳԱԶ-3102, ՊԱԶ-672-M, ԳԱԶ 3102 մակնիշների ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
8. Չարենցավան համայնքի սեփականություն համարվող հողամասը աճուրդային կարգով օտարելու մասին:
9. Զեմֆիրա Անդրեասյանին սեփականության իրավունքով պատկանող 07-019-0201-0036 կադաստրային ծածկագրով 0.089751 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը համայնքային սեփականություն հանդիսացող 07-007-0201-0034 կադաստրային ծածկագրով 0.09 հա գյուղատնտեսական նշանակության համարժեք հողամասի հետ փոխանակելու մասին:
10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

*<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>*

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

**Կողմ -12 դեմ - 0 ձեռնպահ -0**

***Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:***

***Լսեցին.***

***1 Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 69-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ հաշվի առնելով, որ Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատվել է 2019 թվականի դեկտեմբերի 17-ին և չի արտացոլվել 2020 թվականի տարեսկզբի պարտքերը և բյուջեի վարչական ու ֆոնդային մասերի ազատ մնացորդները, ***առաջարկում եմ.*** Չարենցավան համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի «Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 69-Ն որոշման հավելված 1-ում կատարել փոփոխություններ և լրացումներ

*<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան</u>*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ -12 դեմ - 0 ձեռնպահ -0**

***Լսեցին.***

2. ***Չարենցավան համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին***:

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի և «Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի դրույթներով՝ հաշվի առնելով նախորդ տարվա գոյացած պարտքերը ***<u>առաջարկում եմ</u>*** համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումարներ հատկացնել նախորդ տարվա պարտավորությունները մարելու նպատակով:

*<u>Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան</u>*

Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-12 դեմ - 0 ձեռնպահ -0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

***Լսեցին.***

***3.Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Հաշվի առնելով Չարենցավան համայնքի Բջնի գյուղի 6-րդ փող.12 տան բնակիչ ***Մանվել Սամվելի Սահակյանի*** 2020 թվականի հունվարի 13-ի թիվ 81-16 դիմումը ֆինանսական աջակցություն հատկացնելու մասին և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,***առաջարկում եմ*** Չարենցավան համայնքի սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) 4729 «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից 80.0 հազ. դրամ հատկացնել ***Մանվել Սամվելի Սահակյանին:***

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-12** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*

***Լսեցին.***

***4.Չարենցավան համայնքի սեփականության 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:***

***/Զեկ. Գ.Աֆյան/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի և 77-րդ հոդվածի դրույթներով՝***առաջարկում եմ*** հաստատել Չարենցավան համայնքի սեփականության 2019 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

***Համայնքի ղեկավարի տեղակալ Վ.Չիլինգարյան***
Քվեարկության եմ դնում որոշումը:

**Կողմ-12** **դեմ - 0** **ձեռնպահ -0**

*Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:*